



Ֆոտո: CCBE պլենար նիստը Բրյուսելում - Նոյեմբեր 2014

# CCBE Info

N° 40  
 Մարտ 2015

CCBE-ն ողջունում է Նոր գլխավոր քարտուղարին - Եվրոպական փաստաբանների օր 2015- Կանադա: Փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ օրենսդրությունը հակասահմանադրական է- Փաստաբանների պալատի ՓԼՕ ուղեցույցի նախագիծ - ՄԻԵԴ -ի գաղտնալսման դատավճիռ - ԵՄ-ի հաշվետվությունը Գենդերային հավասարության վերաբերյալ- 2015 ԵՄ արդարադատության ցուցատախտակ

## CCBE-Ն ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՆՈՐ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Ֆիլիպ Բյուսերեն CCBE-ի Նոր գլխավոր քարտուղարն է Ջոնաթան Գոլդսմիթի փոխարեն, որը հրաժարական տվեց հունվարին՝ 13 տարի Բրյուսելի գրասենյակի ղեկավարը լինելուց հետո:

“Ես անհամբեր սպասում եմ համատեղել իմ հետաքրքրությունն իրավական հարցերի և հումանիտար մասնագիտությունների CCBE-ի կառավարման հետ,” - ասում է Ֆիլիպը: “Ես ուզում եմ շարունակել CCBE-ի բարի գործը և հետագայում զարգացնել փաստաբանների շահերն ու դերը Եվրոպական և միջազգային շուկաներում:”

Ստանալով Լյովենի, Բելգիայի Կաթոլիկ համալսարանի՝ իրավունքի մագիստրոսի կոչում՝ նախկինում Ֆիլիպը փորձ է ունեցել մասնագիտությունների կառավարման ծառայությունում, որպես գլխավոր տնօրենի տեղակալ, այնուհետև որպես Բելգիայի նոտարների ազգային պալատի տնօրեն: Նա սահուն տիրապետում է անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներին:



## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՕՐ – 10-Ը ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2015Թ.

Հետևելով 2014թ.-ի Եվրոպական փաստաբանների օրվա հաջողությանը, իրադարձությունը ևս մեկ անգամ տեղի կունենա Եվրոպայում **դեկտեմբերի 10-ին 2015թ.** Մարդու իրավունքների միջազգային օրվա հետ միասին: Այս տարվա համար ընտրված թեման է՝ “Խոսքի ազատությունը”, որն արտացոլում է իր տեղն ու ազդեցությունը մեր հասարակության մեջ:

Եվրոպական փաստաբանների օրը հնարավորություն է տալիս տոնել օրենքի գերակայությունը և իրավաբանական մասնագիտության դերը, ինչպես նաև փաստաբանների ընդհանուր արժեքները և ներդրումը արդարադատության համակարգ:

Ավել տեղեկություններն առկա կլինեն մոտակա ամիսներին [www.ccbe.eu/lawyersday](http://www.ccbe.eu/lawyersday) կայքում:



## ԿԱՆԱԴԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ՓՈՂԻ ԼՎԱՑՄԱՆ ՀԱԿԱՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կանադայի Գերագույն դատարանի որոշումը պաշտպանում է փաստաբան - հաճախորդ արտոնությունը և մերժում է Կանադայի դաշնային հակահաբեկչական և փողերի լվացման օրենքը, որը թույլ է տալիս իշխանություններին խուզարկել և առգրավել փաստաթղթեր փաստաբանական գրասենյակներից առանց լիազորագրի և պահանջում իրավաբաններից զեկուցել իրենց հաճախորդների կասկածելի ֆինանսական գործունեությունների մասին կառավարությանը:

Ոչ օրինական ճանապարհով ստացված եկամուտների (փողերի լվացում) և ահաբեկչության ֆինանսավորման որոշումը (ԱՆ 2000) ստիպում է ֆինանսական միջնորդներն, այդ թվում իրավաբաններին տեղեկություն հավաքել, որպեսզի ստուգել այն մարդու ինքնությունը, ում անունից նրանք վճարում կամ գումար են ստանում, պահել գործարքների լայնածավալ գրառուժները, սահմանված ներքին ծրագրեր համապատասխանություն ապահովելու համար: Օրենսդրություն իրավաբաններին նաև ենթարկում է լայնածավալ խուզարկությունների և նյութական գրավուժների, որոնք իրավաբանները պարտավոր են հավաքել, արձանագրել և պահպանել:

Հասարակության իրավունքի ֆեդերացիան պնդում է, որ սխեման


փաստաբաններին դարձնում է անցանկալի պետական գործակալներ և չի ապահովում փաստաբան-հաճախորդ արտոնության համարժեք պաշտպանություն, վերածելով փաստաբանների գրասենյակները արխիվների ոստիկանության և դատախազության համար:



Federation of Law Societies of Canada  
Fédération des ordres professionnels de juristes du Canada

Կարդալ ավելին. [\[Կանադա \(Գլխավոր դատախազ\) և Կանադայի հասարակության իրավունքի ֆեդերացիա, 2015 ԿԳՂ 7\]](#)

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՓՈՂԻ ԼՎԱՑՄԱՆ ՕՐԵՆՄԴՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ



Եվրոպայի փաստաբանների իրավական հասարակության Խորհուրդը (CCBE), Միջազգային փաստաբանների պալատն ու Ամերիկյան իրավաբանների ընկերակցությունը աշխատել են միասին “Փողերի լվացման հայտնաբերման և կանխարգելման փաստաբանի ուղեցույցը” մշակելու նպատակով, որը հրատարակվել է 2014 թ. հոկտեմբերին ու անվճար հասանելի է առցանց: Այս ձեռնարկն առաջարկում է գործնական խորհուրդներ, թե ինչպես ճանաչել հանցագործներին, ովքեր ձգտում են չարաշահել իրավաբանական մասնագիտությամբ փողերի լվացման և/կամ ահաբեկչական գործունեությունների ֆինանսավորման նպատակով, քննարկում է ռիսկի վրա հիմնված մոտեցման զարգացման հայտնաբերումը և արձագանքը կարմիր դրոշմերին:

Բեռնել անվճար ուղեցույցը. [\[http://www.ccbe.eu/fileadmin/user\\_upload/NTCdocument/01748\\_MKT\\_SGP\\_Lawyer1\\_1413961642.pdf\]](http://www.ccbe.eu/fileadmin/user_upload/NTCdocument/01748_MKT_SGP_Lawyer1_1413961642.pdf)

## ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՆ ԶԵՌՆԱՐԿՈՒՄ ԱԱՀ-ԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

2014թ. դեկտեմբերի 1-ին Փարիզի պալատը հայց է ներկայացրել Ֆրանսիայի Պետական խորհրդին խնդրելով, որ ԵՄ Արդարադատության դատարանը խորհրդատվություն տա Մարդու հիմնարար իրավունքների հռչակագրի հետ ԱԱՀ-ի միասնական համակարգի 2006/112 / ԵՀ հրահանգի համատեղելիության մասին: Այս դեպքը վերաբերում է յուրաքանչյուր անհատի իրավունքի ճանաչմանը, ով ենթակա չէ ԱԱՀ գրանցման համար, ինչպես նաև պահուճներ անել իրավական վարույթների հետ կապված իրավական և այլ ծառայություններից նույն պայմաններով, ինչպես նրանց, ովքեր ենթակա են նման հարկի գրանցմանը:

1997թ-ից սկսած CCBE-ն շատ անգամ փորձել է վերացնել կամ նվազեցնել անհատների կողմից օգտագործվող իրավաբանական ծառայություններից գանձվող ԱԱՀ-ն արդարադատության և հավասարության սկզբունքների հիման վրա: CCBE-ն ներկայումս աջակցում է է բելգիական փաստաբաններին ԱԱՀ-ն անվավեր ճանաչելու կապակցությամբ, որը հայտնվեց Բելգիայի Սահմանադրական դատարանում և Եվրոպական արդարադատության դատարանում:



## ԳԱՂՏԱԼՍՈՒՄ. ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔ ՆԵՐԽՈՒԺԵԼՈՒ ՄԻԵԴ-Ի ԴԱՏԱՎՃՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ



Ռումինիայի դեմ գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որոշել էր, որ փաստաբանի և իր հաճախորդի միջև գրույցի՝ նախկինում լիազորված դատարանի կողմից գաղտնալուծման ապօրինի էր, ինչի հիման վրա հայցվորը, որը չի մասնակցել վարույթին և չունի հավաստի փաստեր, չի կարող բողոքարկել անձնական կյանք ներխուժելու օրինականության և անհրաժեշտության դեմ:

Կարդալ ավելին. [\[Pruteanu ընդդեմ Ռումինիայի, գործ № 30181/05\]](#)

## ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑԸ

2015թ-ի փետրվարի 12-ին Եվրոպայի խորհուրդը ներկայացրեց 2014թ-ի տարեկան զեկույցը 2014-2017թթ. գենդերային հավասարության ռազմավարության իրականացման մասին: Այս զեկույցը գնահատում է առաջընթացը, որը ձեռք է բերվել անդամ պետությունների ռազմավարության իրականացման ընթացքում, հավաքում է ստացված արդյունքները:

Կարդալ ավելին: [\[Գենդերային հավասարության ռազմավարության 2014թ-ի տարեկան զեկույցը\]](#)





## 2015Թ-Ի ԵՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՏԱԽՏԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ



Մարտի 9-ին Եվրոպական ժողովը հրապարակեց 2015թ-ի ԵՄ արդարադատության ցուցատախտակը (հասանելի է միայն անգլերեն լեզվով), որը տալիս է անդամ պետությունների արդարադատության համակարգերի որակի, ինքնուրույնության և արդյունավետության մասին բովանդակությունը:

ԵՄ արդարադատության ցուցատախտակը տեղեկատվական միջոց է, որը ձգտում է աջակցել անդամ պետություններին տրամադրելով արդյունավետ արդարադատության օբյեկտիվ, հուսալի և համադրելի տվյալներ իրենց քաղաքացիական, առևտրային ու վարչական արդարադատության համակարգից:

Մասնավոր երկրների հարկման գումարի հետ միասին ԵՄ արդարադատության ցուցատախտակը նպաստում է բացահայտել հնարավոր թերությունները և խրախուսել անդամ պետություններին, անհրաժեշտության դեպքում, իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ արդարադատության ոլորտում:

### ԱՌԱՋԻԿԱ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

- 23/04/15. Եվրոպայի իրավաբանների հիմնադրամի մեկնարկ, Հաագա
- 24/04/15. CCBE մշտական հանձնաժողով, Հաագա